

**Հայաստանի Հանրապետության դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսը**

Հայաստանի Հանրապետության դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի առաջին համարը լույս է տեսել 1997թ. հոկտեմբերին:

1998 թվականի հուլիսի 1-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունված «Դատախազության մասին» (ՀՕ-245) ՀՀ օրենքի 45-րդ հոդված՝

**ՀՈԴՎԱԾ 45. ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՏՊԱԳԻՐ ՄԱՐՄԻՆԸ**

**Դատախազության տպագիր մարմինը "Օրինականություն" տեղեկագիրն է:**

Տեղեկագրի հրատարակման աշխատանքները համակարգում է խմբագրական խորհուրդը, որի կազմը հաստատվում է ՀՀ գլխավոր դատախազի հրամանով:

Դատախազության մարմինների աշխատանքի տարբեր ոլորտների վերաբերյալ նյութերի հրապարակմանը զուգահեռ, տեղեկագրի էջերում առանձնակի տեղ է հատկացվում դատախազական գործունեության խնդիրներին, պետության և իրավունքի հիմնահարցերին նվիրված գիտագործնական հոդվածներին և ուսումնասիրություններին, հետազոտություններին, դատախազական և քննչական առաջավոր փորձի տարածմանը ծառայող վերլուծություններին և մեթոդական նյութերին, ինչպես նաև դատախազության միջազգային համագործակցությանը նվիրված հրապարակումներին:

«Օրինականություն» գիտագործնական երկամսյա տեղեկագրի էջերում լուսաբանվում են միջազգային և հայ իրավունքի տեսական և դատախազության գործունեության բոլոր բնագավառների աշխատանքները:

Հանդեսի լույսընծայումը թե՛ հանրապետության իրավագետների և թե՛ դատախազների համար դարձել է գիտական կարծիքների արտահայտման և գիտական բանավեճերի հարթակ:

Բացի այդ, անցած տարիների ընթացքում գիտական հանրույթին հաղորդակից է դարձվել հայ իրավական մտքի ձեռքբերումներին: Հանդեսի խորը տեսական և փորձագիտական վերլուծությունները, եզրակացությունները, կանխատեսումները և գործնական առաջարկությունները նպաստել և նպաստում են իրավագիտության մեջ բարձր չափանիշների ձևավորմանը: Հաջողվել է ապահովել հին և նոր սերունդների գիտական հետաքրքրությունների հավասարակշռվածությունը՝ դրանով իսկ ձևավորելով հանդեսի նկատմամբ հետաքրքրություն ինչպես տեսաբան իրավագետների, այնպես էլ իրավակիրառ ընթերցողների շրջանում:

«Օրինականությունը» ծառայում է հանցավորության դեմ պայքարում ծագող նոր հիմնախնդիրների և մարտահրավերների գործում տեսական և գործնական արդի լուծումներ առաջարկելու նպատակին: Հրապարակելով բարձրորակ հոդվածներ, ոչ միայն ընթերցողին է փոխանցվում իրավագիտական տարբեր ոլորտների մտքի նվաճումները, այլև, դրանով ձևավորվել է նոր իրավական մշակույթ, ինչի շնորհիվ հանդեսում ներկայացվում են գիտական բարձրարժեք աշխատանքներ, ինչն «Օրինականության» բարձր վարկանիշի առհավատյան է:

**Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսը ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից (ԲՈՀ) ընդգրկված է թեկնածուական (1999թ.-ից.) և դոկտորական (2012թ.-ից) ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում, հետևաբար տպագրվող հոդվածները պետք է համապատասխանեն այդ չափանիշներին:**

Դատախազության մարմինների աշխատանքի տարբեր ոլորտների վերաբերյալ նյութերի հրապարակմանը զուգահեռ, տեղեկագրի էջերում առանձնակի տեղ է հատկացվում դատախազական գործունեության խնդիրներին, պետության և իրավունքի հիմնահարցերին նվիրված գիտագործնական հոդվածներին և ուսումնասիրություններին, հետազոտություններին, դատախազական և քննչական առաջավոր փորձի տարածմանը ծառայող վերլուծություններին և մեթոդական նյութերին, ինչպես նաև դատախազության միջազգային համագործակցությանը նվիրված հրապարակումներին:

«Օրինականություն» գիտագործնական երկամսյա տեղեկագրի էջերում լուսաբանվում են միջազգային և հայ իրավունքի տեսական և դատախազության գործունեության բոլոր բնագավառների աշխատանքները:

Հանդեսի լույսընծայումը թե՛ հանրապետության իրավագետների և թե՛ դատախազների համար դարձել է գիտական կարիճիքների արտահայտման և գիտական բանավեճերի հարթակ:

Բացի այդ, անցած տարիների ընթացքում գիտական հանրույթին հաղորդակից է դարձվել հայ իրավական մտքի ձեռքբերումներին: Հանդեսի խորը տեսական և փորձագիտական վերլուծությունները, եզրակացությունները, կանխատեսումները և գործնական առաջարկությունները նպաստել և նպաստում են իրավագիտության մեջ բարձր չափանիշների ձևավորմանը: Հաջողվել է ապահովել հին և նոր սերունդների գիտական հետաքրքրությունների հավասարակշռվածությունը՝ դրանով իսկ ձևավորելով հանդեսի նկատմամբ հետաքրքրություն ինչպես տեսաբան իրավագետների, այնպես էլ իրավակիրառ ընթերցողների շրջանում:

«Օրինականությունը» ծառայում է հանցավորության դեմ պայքարում ծագող նոր հիմնախնդիրների և մարտահրավերների գործում տեսական և գործնական արդի լուծումներ առաջարկելու նպատակին: Հրապարակելով բարձրորակ հոդվածներ, ոչ միայն ընթերցողին է փոխանցվում իրավագիտական տարբեր ոլորտների մտքի նվաճումները, այլև, դրանով ձևավորվել է նոր իրավական մշակույթ, ինչի շնորհիվ հանդեսում ներկայացվում են գիտական բարձրարժեք աշխատանքներ, ինչն իր հերթին հանդիսանում է «Օրինականության» բարձր վարկանիշի առհավատչյան: